ու զէնքով ուժովցած Տաճկաստան, նախ եւ առաջ:

Եւ դա կատարւում է աներեւոյթ ձեւով: Աւելին դեռ. տեղի ունեցող դէպքերին Անգլիան դիտմամբ հակառակ երեւոյթն է տալիս: Եւ սակայն վաղը նոյն այդ երեւոյթները իրենց սեփական զոյնով ու պատկերով հրապարակ պիտի գան: Այդ անկասկած է: Այսպէս կամ այնպէս, այսօրուան համար փաստը մնում է փաստ. Ե՛ւ Անգլիան ու Ռուսաստանը, ե՛ւ Իտալիան ու Ֆրանսան ճգակոր են լինում՝ իրենց բարեկամութեան եւ բարեացակամութեան ապացոյցները տուած լինելու համար Տաճկաստանին: Մի ժամանակ Մուսոլինի օդի մէջ սուսեր էր ճօճում, ռազմաշունչ ճառեր էր ուղղում Տաճկաստանի հասցէին, բայց նա չուտ լռեց, հէնց որ մի քանի կոնցէսիաներ (արտօնութիւններ) ստացաւ: Եւ ի՞նչ օգուտ մեզ ու Հայաստանին՝ իտալացիների սնած ծրագիրների յաջողութեան պարագային անդամ, որոնց հետ այնչա՞փ միամիտօրէն ինչ որ հաշիւներ էին կապում մի չարք հայեր. մոռանալով միշտ, որ Տաճկաստանը փոքրացնելով եւրոպական հողի վրայ եւ արեւմտեան Փոքր Ասիայում, պետութիւնները, իրենց համար տեղ բանալու մտահոգութեամբ, նրան քշում են դէպի Արեւելք, մեզ վրայ, մեր մարմնի վրայով էլ՝ աւելի հեռուները, բայց միշտ՝ դէպի Արեւելք:

Տաճկաստանի ու մեր իսկ պատմութիւնից դասեր չառաւ վիպասաց հայ մտածողութիւնը, երազատեսի դերում մնալով հանապազ, «որչափ վատ իմ թշնամիի համար, այնչափ լաւ՝ ինձ համար» բառախաղը քաղաքական նշանաբան դարձնելով: Մոռանալով միշտ էլ, որ թուլացող, անդամ մնանկացող պարտատիրոջ վնասների հատուցումը, նրա մուրհակների զեղչումը մէկ խոշոր չափով իր վրայ է ընկնում անխուսափելիօրէն:

III

Եւ այսպէս, եւրոպական մեծ պետութիւնները առանձին-առանձին եւ բոլորը միացած՝ Տաճկաստանի ուժեղացմանն են նպաստում: Տարբեր հաշիւներ անելով ու տարբեր ելակէտներ ունենալով հարկաւ, որից սակայն փաստական դրութիւնը չի փոխւում: Նրանք բոլորը, առարկայօրէն վերցրած, նորոգուող Թուրքիայի մի-մի զօրաւոր յենարաններն են, նրա ամբողջականութեան արթուն պահապանները: Առաջին հերթին՝ Ռուսիան, լքելով իր դարաւոր քաղաքականութիւնը: Բոլորն էլ, եթէ կարելի է այսպէս արտայայտուիլ, «տաճկական օրիենտացիային» են հետեւում: Եւ առաջին հերթին, կրկնում ենք, Ռուսաստանը: Տարաբեր խնդիր՝ վերջնական հաշուով ուղի՞ղ թէ սխալ, ռուսական դերադոյն եւ հեռաւոր շահերի տեսակէտից նպաստաւո՞ր թէ անընպաստ քաղաքականութիւն: Փաստը դրանից չի փոխւում: Այն որ՝ Մոսկուան որդեգրել է բոլորովին հակառակ մի քաղաքականութիւն Տաճկաստանի վերաբերմամբ, քան որ հետապնդել է Պետերբուրգը երկու հարիւր տարիների ընթացքում:

Խորհուրդները որդեգրել են Տաճկաստանի ամբողջականութեան տեսակէտը, տաճկական օրիենտացիա, զոհ բերելով հայ ժողովուրդի եւ Հայաստանի ամենակենսական շահերը:

Այդ բաւական չէ՛: Ինչպէս հին Ռուսաստանը, նորը եւս շարունակում է, անմիջապէս եւ ուղղակի միջոցներով մեզ վնասելով մէկ-տեղ, նաեւ միջնորդապէս եւ անուղղակի կերպով հարուածել: Նրանով որ՝ շահագործում եւ չարագործում է մեր թշնամութիւնը Տաճկաստանի հետ: Մի թշնամութիւն թէեւ, որի հիմքում զգալի չափով հէնց մեր ռուսասիրութիւնն է դրուած, մեր «ռուսական օրիենտացիան»: Նման շահագործման երեւոյթը մանրանկար չափով մենք վրացական քաղաքականութեան մէջ տեսանք, հայ-ադրբէջանեան հարցում: Շատ աւելի մեծ չափերով դա տեղի է ունեցել միշտ եւ այժմ էլ տեղի ունի՝ ռուսների որդեգրած քաղաքականութեան մէջ: Եւ իր այդ քաղաքականութեամբ — հակահայ եւ հայասպան իր խորքում — Ռուսիան ծանր հարուածներ է հասցնում մեզ ո՛չ միայն տաճկական, այլ եւ անդրկովկասեա՛ն գետնի վրայ: Խորը համոզուած մեր անուղղայ հակաթուրք դէմն — բոլո՞ր պարագաներում եւ բոլո՞ր դէպքերում — ապա նաեւ կատարելապէս վստահ մեր անծայրածիր «հաւատարմութեանը» ռուսական դրօշին, Մոսկուան Հայաստա-